26 ապրիլի 2018 թվականի N 523 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 935-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N 935-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման N 1 հավելվածի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2.1. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի տարածքային բաժին.

2.2. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործություն-ների քննության բաժնի տարածքային բաժին.».

3) որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի աղյուսակի 3-րդ կետի «Միավորի թիվը» սյունակում «3» թիվը փոխարինել «1» թվով.

2) որոշման N 2 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին և 1.2-ին ենթակետերով.

«1.1) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի տարածքային բաժին

«

NN ը/կ	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը	Պաշտոնի խմբի ենթախումբը
1.	Պետ	1	գլխավոր 3-րդ
2.	Առաջատար մասնագետ	1	կրտսեր 1-ին
3.	1-ին կարգի մասնագետ	1	կրտսեր 2-րդ

».

1.2) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում կատարված հանցագործություն-ների քննության բաժնի տարածքային բաժին

«

NN ը/կ	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը	Պաշտոնի խմբի ենթախումբը
1.	Պետ	1	գլխավոր 3-րդ
2.	Առաջատար մասնագետ	1	կրտսեր 1-ին

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ